Ճուղուր Երևանցի

ՈՒՐԱԽ ՆԿԱՐԻՉ

ԹԵ ԻՆՉՈՒ...

Հեքիաթներ պտուղների մասին

կարդա
և
գունավորիր

2

Ճուղուր Երևանցի

Թե ՄՆՉՈՒ...

Հեքիաթներ պտուղների մասին



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԿԱՆԱՉ ՁՄԵՐՈՒԿԸ ՆԵՐՍԻՑ ԿԱՐՄԻՐ

Սիրելի՛ երեխաներ, դուք շատ լավ գիտեք, որ ձմերուկներն աճում են դաշտերում, հենց հողի վրա: Սակայն նրանք միշտ էլ ձգտել են աճել ծառերի վրա, որպեսզի բարձրից նայեն, թե ինչ կա-չկա աշխարհում, ինչպիսի անցուդարձով են ապրում մարդիկ, կենդանիները: Իսկ եթե գարնանը ձմերուկները շատ փոքր էին և կարող էին կախվել ծառի ճյուղերից, ապա ամռանը նրանք շատ էին մեծանում, և ոչ մի ծառ չէր թույլատրում ձմերուկներին կախվելու իրենց ճյուղերից: Ախր դրանք շատ ծանր էին, և ոչ մի ճյուղ չէր դիմանա այդ քաշին ու կկոտրվեր:

Այսպես, երկար ժամանակ, ձմերուկներն աճում էին հողի վրա և չէին դադարում երազել, որ մի օր կհայտնվեն ծառերի ճյուղերին: Սակայն, նրանց այդպես էլ չէր հաջողվում համոզել ծառերին և կախվել դրանց ճյուղերից:

Եվ ահա օրերից մի օր ձմերուկները որոշեցին խաբեությամբ իրականացնել իրենց վաղեմի երազանքը: Չգիտես թե որտեղից, ձմերուկների

դաշտում նախորդ գարնանը մի ծառի սերմ էր ընկել և հաջորդ տարի արդեն իր մատղաշ ցողունով հասակ էր առել: Երիտասարդ ծառը իր շուրջը միայն ձմերուկներ էր տեսնում և արդեն ընկերություն էր անում նրանց հետ: Խոսում էին դեսից-դենից և, ինչու չէ, նաև իրենց երազանքներից:

- Ես երազում եմ աճել, հասակ առնել և մեծ ծառ դառնալ՝ հաստաբուն, հզոր ճյուղերով ու փարթամ տերևներով,- մի օր ասաց երիտասարդ ու մատղաշ ցողունով ծառը:

- Իսկ մենք չենք ուզում հասակ առնել,- ստեցին ձմերուկները,- մենք հողին կպած էլ մեզ լավ ենք զգում. ինչ կա այդ վերևներում:

- Օ՛, եթե դուք տեսնեք, թե ինչ գեղեցիկ է մեր շրջապատը վերևից: Հիմա գարուն է, շուրջ բոլորը գեղեցիկ դաշտեր են՝ լեցուն ծաղիկներով, իսկ դաշտերի միջով ուրախ և զվարթ հոսում է արծաթագույն գետակն ու զովություն պարգևում բոլորին,- գլուխը վեր բարձրացնելով՝ ասաց արդեն հասակ առած մատղաշ ծառը:

- Շատ ափսոս, որ մենք այդ ամենը չենք տեսնում,- պատասխանեցին գարնանային փոքրիկ ձմերուկները,- այ, եթե դու թույլ տաս, սիրելի՛ ծառ, մենք կմագլցենք քո բարալիկ ցողունի վրա և նույնպես կզմայլվենք գարնանային դաշտերի գեղեցկությամբ:

- Իսկ դուք ինձ ցավ չե՞ք պատճառի, բա որ հետո մեծանաք ու ձեր ծանրության տակ իմ ցողունը չդիմանա, ախր ես ընդամենը մեկ տարեկան եմ և դեռ չգիտեմ, թե ինչպիսի տեսք ունեն ձմերուկները, երբ նրանք հասունանում են,- մտահոգվեց մատղաշ ծառը:

- Դու մի մտահոգվիր, տեսնում ես, թե ինչ փոքր ենք և կանաչ, մենք սրանից ավելի չենք մեծանում,- ստեցին ձմերուկները:

- Դե, որ այդպես է, իմ կանաչ և կլորիկ բարեկամներ, ես թույլ եմ տալիս ձեզ մագլցել ինձ վրա, փաթաթվել իմ ցողունին ու միասին ապրել մինչև աշուն: Իսկ հետո մարդիկ բերքահավաքին ձեզ կքաղեն հենց իմ վրայից,- պատասխանեց երիտասարդ և միամիտ ծառը:

Անցան օրեր, ծառը և ձմերուկները հաշտ ու խաղաղ, միմյանց



փաթաթված, աստիճանաբար հասակ էին առնում և նայում էին հեռուները ու հիանում բնության գեղեցկությամբ՝ դաշտային ծաղիկներով, կանաչ մարգագետիններով, քրքջան գետակով: Բայց ծառը զգում էր, որ օրեցօր ձմերուկները ծանրանում էին: Ախր խեղճը որտեղից իմանար, որ ձմերուկները խաբել են իրեն, որպեսզի մագլցեն: Չէ՞ որ արդեն ամռան վերջին ձմերուկները հասունանում են և ոչ միայն մեծանում, այլև սաստիկ ծանրանում են:

Եվ ահա, ամռան վերջին, ծառին փաթաթված ձմերուկներն այնքան հասունացան ու մեծացան, որ նրանց ծանրության տակ չդիմացավ երիտասարդ խեղճ ծառը: Ի վերջո կոտրվեց մատղաշ ցողունը և ծառը հառաչելով ընկավ, վերջին ուժերը լարելով ու բացականչելով.

- Ինչո՞ւ ինձ խաբեցիք, ստախոս ձմերուկներ, ախր դուք փչացրիք իմ ապագան և կոտրեցիք բունս, ես այլևս տապալված եմ:

Կանաչ և հասունացած ձմերուկները շատ վատ զգացին, երբ տեսան, որ իրենց ստի պատճառով ցավ պատճառեցին ծառին ու ջարդեցին վերջինիս ցողունը: Նրանք նույնիսկ ամոթից

ներքուստ կարմրեցին՝ վատ զգալով իրենց արարքի համար:

Սակայն ոչինչ. կոտրվեց միայն ծառի բունը, բայց հո արմատը ողջ մնաց, որը հաջորդ տարի նոր ցողուն տվեց, և ծառը նորից ծնունդ առավ ու դաշտի միջից բարձրացավ վեր ու վեր:

Իսկ կանաչ ձմերուկներն այդպես էլ հողին կպած մնացին: Նրանք իրենց այդտեղ էլ վատ չէին զգում՝ բայց միայն գարնանը: Իսկ երբ



գալիս էր ամառվա վերջը, հիշում էին թույլ տված խաբեության մասին, և վեր նայելով իրենց նախկին ընկերոջը՝ վեր բարձրացող ծառին, ամոթից վատ էին զգում ու ներքուստ աստիճանաբար կարմրում ու կարմրում, մինչև բերքահավաքը:



ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՔԱՅԱԽՆՁՈՐԸ ԹԱԳ ՈՒՆԵՑԱՎ

Երևի նկատած կլինեք, որ արքայախնձորները, որոնց օտարները նաև անանաս են կոչում, թագ ունեն: Իսկապես, եթե արքայախնձորն ուղղահայաց դնենք սեղանին, ապա նրա վերևում կոշտ ու երկար տերևներ կնկատենք, որոնք թագի են նման: Իսկ թե ինչպես եղավ, որ արքայախնձորները թագ ունեցան, հիմա ես ձեզ կպատմեմ:

Նախորդ հեքիաթներից դուք հիշում եք, որ կենդանիներն իրենց համար թագավորներ էին ընտրել: Այ, օրինակ, արծիվը թռչունների թագավորն էր, իսկ առյուծը՝ չորքոտանիների արքան:

Այդ մասին շատ լավ գիտեին պտուղները, և իրենք էլ էին ցանկանում թագավոր ունենալ: Բայց թե ում ընտրեին



իրենց միջից, չէին կարողանում որոշել: Ախր պտուղներն աճում էին աշխարհի տարբեր անկյուններում: Նրանց մի մասը, որոնք ջերմասեր էին, ինչպես բանանը, լիմոնը, նարինջը, աճում էին տաք երկրներում: Իսկ համեմատաբար ցուրտ երկրներում աճում էր տանձենին, բալենին, կեռասենին, որոնք ցրտադիմացկուն էին: Եվ ստացվում էր այնպես, որ տաք և ցուրտ երկրներում աճող պտուղները հազվադեպ էին հանդիպում միմյանց, ուստի նրանց միջից թագավոր ընտրելը չափազանց բարդանում էր:



Միայն խնձորենին էր, որ ազատ և անկաշկանդ աճում էր թե՛ ցուրտ և թե՛ տաք երկրներում: Նա ցրտից այնքան էլ չէր վախենում, իսկ շոգից բնավ էլ չէր ճլորում ու լավ էլ աճում էր: Եվ սա տեսնելով՝ աշխարհի բոլոր պտուղները ժողով արեցին ու որոշեցին իրենց թագավոր կարգել խնձորին: Չէ՞ որ խնձորը ամենուր աճում էր և այդպիսով կարող էր կառավարել բոլոր պտուղներին: Հենց այդպես էլ վարվեցին և խնձորին թագավոր կարգեցին:

Բայց, ավաղ, դրանից հետո խնձորը չէր էլ գիտակցում, որ թագավոր է և ունի մեծ պատասխանատվություն մնացած պտուղների առջև: Թագավորական կարևոր գործերը թողած, ամեն օր խաղ էր անում ծառի ճյուղերը ճոճող քամու հետ, կռիվ տալիս ծառ բարձրացող որդերի ու



թրթուրների դեմ: Իսկ երբ պտուղները, գալիս էին իրենց թագավորի մոտ՝ գանգատ անելու կամ խորհուրդ առնելու, միշտ խնձորից նույն պատասխանն էին ստանում.

- Ես հիմա ժամանակ չունեմ,- պատասխանում էր խնձորը,- թագավորական գործերով դիմեք իմ օգնականին, նա նույնպես խնձոր է և իմ զարմիկն է, բայց աճում է ոչ թե ծառերի, այլ հողի վրա, ինչպես ձմերուկը:

Եվ պտուղները դիմում էին տաք երկրներում աճող անանասին, որը խնձորի զարմիկն էր և նրա նման չէր աճում ծառերի վրա: Բայց փոխարենը նա շատ հոգատար ու պատասխանատու էր մյուս պտուղների նկատմամբ, ինչպես վայել էր իսկական թագավորին: Միշտ լուծում էր ծագած վեճերը, օգտակար խորհուրդներ տալիս մյուս պտուղներին, դառնում էր դրանց միջև ծագած վեճերի արդար դատավորը:

Այսպես շարունակվեց մի որոշ ժամանակ, երբ խնձորը մշտապես հրաժարվում էր իր թագավորական գործերից և այդ պարտականությունը թողնում էր իր զարմիկի վրա: Պտուղներն էլ կարծես այդ իրավիճակից գոհ էին, քանի որ շատ էին հարգում անանասին և

ի վերջո նրան էին տեսնում որպես թագավոր, քանի որ թագավորի օգնականի միջոցով լուծում էին իրենց խնդիրները:

Եվ պահը չուշացավ, մի աշնանային գեղեցիկ օր բոլոր պտուղները նորից ժողով հրավիրեցին և որոշում կայացրին գահընկեց անել խնձորին և նոր թագավոր կարգել նրա զարմիկին՝ անվանելով վերջինիս արքայախնձոր:

Հոգ չէր, որ արքայախնձորն աճում էր միայն տաք երկրներում: Նրան արդեն բոլոր պտուղները ճանաչում էին թե՛ տաք և թե՛ ցուրտ երկրներում, հարգում ու տեսնում էին որպես իրենց թագավոր: Իսկ որպեսզի թագավորը տարբերվեր մյուս պտուղներից, արքայախնձորին թագադրեցին արքայավայել՝ նրա գլխին դնելով խոտերից սարքված մի գեղեցիկ թագ, որը մինչև այսօր էլ նա կրում է հպարտորեն:



ԹԵ ԻՆՉՈՒ Է ԾԻՐԱՆԸ ԵՐԿՈՒ ԿԵՍԻՑ



Ծիրանը շատ տարիներ առաջ ամբողջական էր և աճում էր ինչպես խնձորը կամ տանձը՝ առանց իր երկու կեսի: Իսկ թե ինչպես եղավ, որ ծիրանը երկու կես ունեցավ, հիմա ես ձեզ կպատմեմ:

Դուք նախորդ հեքիաթից հիշում եք, որ պտուղներն իրենց թագավոր ընտրեցին արքայախնձորին, որը, ճիշտն ասած, այնքան էլ ծիրանի սրտովը չէր: Նա գտնում էր, որ ինքն էր արժանի դառնալու պտուղների թագավոր և ոչ թե արքայախնձորը: Չէ՞ որ շատ գեղեցիկ էր, երբ հասունանում էր: Ճիշտ է, երբ խակ էր, նա կանաչավուն էր ու թթու, բայց երբ գալիս էր բերքահավաքի ժամանակը, ծիրանը դառնում էր ոսկեգույն, փայփլուն, իսկ պտուղը՝ չափազանց համով ու քաղցրահամ: Մարդիկ գնահատում էին այս ամենը և անընդհատ գովերգում ծիրանին:

Դե, իհարկե, տեսնելով այս բոլորը, ծիրանը շատ էր պարծենում և միշտ ինքնահավանորեն իրեն ցուցադրում էր պտուղների շրջապատում:



- Չեք տեսնում, որ ես ավելի գեղեցիկ եմ, քան արքայախնձորը, ավելի համեղ եմ. նույնիսկ իմ կուտն է համով, և մարդիկ այս ամենը գնահատում են, իսկ դուք՝ ոչ: Ինչո՞ւ ինձ թագավոր չեք ընտրում,- միշտ խոսք էր բացում ծիրանը:

Իսկ այդ խոսքից պտուղները միշտ զարմանում էին: Ինչո՞ւ այս ծիրանը չէր հասկանում, որ գեղեցկությունը կամ քաղցրահամությունն այնքան էլ կարևոր չէին թագավոր դառնալու համար: Այստեղ պետք էր ավելի շատ իմաստություն, համբերատարություն և աշխատասիրություն, որը ծիրանը չուներ: Ինչ խոսք, նա շատ գեղեցիկ էր և համեղ, բայց, դե, թագավոր դառնալու այնքան էլ լուրջ պատճառներ չուներ:

Սակայն ծիրանն այս բոլորը չէր գիտակցում և անընդհատ փնթթում էր, թե ինչու՞ իրեն թագավոր չեն ընտրել: Եվ ահա, օրերից մի օր այս փնփնթոցը լսեց նաև արքայախնձորը և ասաց.

- Հիմա ամառ է և շատ շոգ: Ուզում եմ մի քիչ հանգստանալ և մեկ ամսով արձակուրդ գնալ, իսկ թագավորական գործերս այս ընթացքում հանձնում եմ ծիրանին, թող նա պտուղներին ղեկավարի:

Արքայախնձորը շատ իմաստուն էր ու լավ էր հասկանում, որ գեղեցկուհի ծիրանը, նամանավանդ ամռանը, երբ հասունանում էր ու ծանրանում, ի վիճակի չէր արքայական գործերը գլուխ բերել: «Թող փորձի ու հասկանա, թե ինչքան դժվար ու հոգսաշատ է թագավոր լինելը», - մտածում էր պտուղների արքան:

Այնդպես էլ եղավ, ինչպես մտածում էր արքայախնձորը: Նա գնաց արձակուրդ և կարգադրեց, որ մեկ ամսով թագավորական գործերը հանձնեն ծիրանին: Ինքնագոհ ծիրանը դրանից շատ ոգևորվեց և ուրախ գործի անցավ:

Բայց, ավաղ, այդ ուրախությունը երկար չտևեց: Թագավորական գործերը բարդ էին և հոգսաշատ: Անչափ դժվար էր աշխարհի բոլոր պտուղներին ղեկավարելը միանգամից: Մեկը գալիս էր գանգատի, մյուսը՝ խորհրդի, երրորդը օգնություն էր խնդրում, և մեկ օրում այնքան շատ էին այս ընդունելությունները, որ ծիրանը չէր հասցնում և ոչ մի գործ իր ավարտին հասցնել:

Այսպես անցավ մեկ շաբաթ, և պտուղներն սկսեցին գանգատվել, որ ծիրանը ծուլություն է անում և իրենց գործերին լուծում չի տալիս:

- Ամբողջ ձեր հոգսերը բերում և լցնում եք իմ գլխին, թողեք հանգիստ իմ թագավորությունը անեմ, ես հո չե՞մ կարող երկու կես լինել և բոլոր հարցերը արագ լուծել,- արդարանում էր ծիրանը:

- Դե, եթե դու մեր թագավորն ես, ուրեմն պետք է լուծում տաս այն բոլոր հարցերին, որոնք քեզ ներկայացնում են պտուղները՝ թեկուզ օր ու գիշեր աշխատելով և երկու կես լինելով,- պատասխանում էին պտուղները:

Եվ որպեսզի հասցնի իր թագավորական գործերը, ծիրանը որոշեց երկու կես լինել և շատ աշխատել. չէ՞ որ այս ամենը ժամանակավոր էր՝ մինչև արձակուրդից արքայախնձորի վերադառնալը:

Արդյունքում, երկու կես եղած, ծիրանը մեկ ամիս աշխատեց թագավորի պաշտոնում, հասցրեց իր բոլոր գործերն ավարտել և հետո հեռացավ պալատից: Ճիշտն ասած, նրան դուր չեկավ թագավոր լինելը. ավելի լավ էր ապրել անհոգ և հանգիստ կյանքով: Սակայն ծիրանին չափազանց դուր եկավ երկու կեսով աճելը, և այդպես շարունակում է մինչև այսօր:



Անկեղծ ասած, մեզ էլ է հարմար այդպիսի ծիրանը. չէ՞ որ այդքան հեշտ ենք այն կիսում և միջից ճաշակում համեղ կորիզը:

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԽԱՂՈՂԸ ՈՂԿՈՒՅԶՈՎ

Խաղողը, որին մենք այդքան սիրում ենք, շատ օգտակար հատկություններ ունի: Բացի նրանից, որ այն շատ համեղ է և աշնանային մեր սեղանի զարդն է, խաղողից մարդիկ դոշաբ են պատրաստում հիվանդների համար կամ գինի են քամում խնջույքների համար: Խաղողի հատիկներից նաև չամիչ են պատրաստում, որը նույնպես քաղցրահամ և հաճելի սնունդ է՝ նամանավանդ ձմռանն ու գարնանը, երբ մեր երկրում մրգեր չեն աճում:



Բայց արի ու տես, որ խաղողը այս օգտակար հատկությունների հետ մեկտեղ, ունի նաև մի շատ հետաքրքիր ցանկություն: Նա միշտ աճում է ողկույզով, որի վրա շարված են ձեռք ձեռքի ամուր բռնած հատիկները: Իսկ թե ինչու է այդպես, հիմա ես ձեզ կպատմեմ:

Կար մի ժամանակ, որ խաղողի հատիկներն աճում էին առանձին-առանձին՝ առանց ողկույզի շուրջը հավաքվելու: Նրանք շարվում էին խաղողի տերևների վրա և ամեն օր ուրախ երգեր էին երգում: Հատկապես, նրանց երգը գեղեցիկ էր դառնում մայրամուտին, երբ, արևի ճառագայթներից տաքացած, բարձր տրամադրություն էին ունենում և միմյանց ձայն տալով՝ արդեն խմբովի էին երգում: Շուրջ-բոլորը ուրախ տրամադրություն էր ստեղծվում, այնքան ուրախ, որ ծղրիդներն էլ էին միանում այս երգին, նույնիսկ թռչուններն էին ձայնակցում:



Եվ դա էր պատճառը, երբ խաղողից պատրաստված գինին մարդիկ խմում էին, բարձր տրամադրությամբ ուրախ-ուրախ սկսում էին երգել, քանի որ նրանց հենց խաղողի հատիկներն էին երգացնում:

Իսկ ամենից ուրախը խաղողի հատիկներն էին, քանի որ գիտեին, թե ինչքան օգտակար էին մարդու համար: Ավելին, նրանք ջանք չէին խնայում, որ մարդիկ իրենց նկատեին, և եթե տեսնում էին, որ իրենց երգն աննկատ էր մնում, սկսում էին աշնանը գեղեցիկ հագուստներ հագնել՝ կարմիր, սև, կանաչ, ոսկեգույն: Եվ հենց այդ ժամանակ էր, որ մարդը նկատում էր նրանց և հավաքում՝ տուն տանում:

Սակայն խաղողի հատիկներն ունեին թշնամիներ՝ դրանք մեղուներն էին: Դուք շատ լավ գիտեք, սիրելի երեխաներ, որ մեղուները ամռանը և գարնանը նեկտար էին հավաքում ծառերից, իսկ հետո աշնանը իրենց փեթակներում մեղր սարքում և ամբողջ

ձմեռ ուտում այն՝ դուրս չգալով փեթակներից: Բայց արի ու տես, որ չնայած փեթակներում ձմռանը տաք էր և սնունդ էլ կար, կարծես թե մեղուների համար ձմեռային կյանքը մի քիչ ձանձրալի էր: Դե, իհարկե, ամբողջ օրը մեղր ուտելով ու փեթակում մնալով ո՞վ չէր ձանձրանա:

Եվ ահա, ունկնդրելով խաղողի հատիկների այս գեղեցիկ երգը, մեղուները որոշեցին գողանալ նրանց, տանել փեթակ, որպեսզի ձմեռը հատիկները երգեին և զվարճացնեին իրենց: Իսկ դա դուր չէր գալիս խաղողին, քանի որ հատիկները փչանում էին փեթակներում, նրանցից մեղուները պարզապես չէին օգտվում, միայն երգացնում էին խեղճերին: Իսկ որքան օգուտ կտային խաղողի հատիկները, եթե այդ ընթացքում օգտագործվեին մարդու կողմից: Դե, դա չէր հետաքրքրում ինքնասեր մեղուներին, և նրանք շարունակում էին իրենց չարաճճիությունը և, հատիկները պոկելով խաղողից, տեղափոխում էին փեթակներ:

Ու մի օր էլ խաղողի հատիկները որոշեցին, որ այլևս անհնար է միայնակ պայքարել մեղուների դեմ և, համախմբվելով միմյանց շուրջ, կազմեցին ողկույզներ: Ու դրանից հետո մեղուները չէին կարողանում պոկել խաղողի հատիկները, չէ՞ որ նրանք շատ ամուր էին կառչած միմյանցից, և ձեռք-ձեռքի տված, ողկույզ կազմելով, սպասում էին բերքահավաքին, որպեսզի օգտակար լինեին մարդկանց համար:



Իսկ դուք գիտեք, սիրելի երեխաներ, որ ողկույզ կազմելով նրանք ոչ միայն երգում, այլև շուրջպար են բռնում, որը կնկատեք, եթե ուշադիր դիտեք խաղողի վազին հասունացած ողկույզը: Խոստովանենք, որ մարդիկ էլ են շուրջպար բռնում և երգում, երբ խմում են խաղողի քաղցրահամ գինին:

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԿԻՏՐՈՆՆ ԱՅԴՔԱՆ ԹԹՎԱՀԱՄ

Ես գիտեմ, սիրելի՛ երեխաներ, որ դուք կիտրոն չեք սիրում, և, անկեղծ ասած, շատերը չեն սիրում, որովհետև այդ միրգը թթու է, և պարզապես շատ դժվար է այն կծել և ուտել: Իսկ այ, օրինակ, նարինջը, ճիշտ է մի քիչ թթվաշ է, բայց բոլորս էլ հաճույքով այն ուտում ենք, հատկապես երբ գալիս է Ամանորը: Եվ պատճառն էլ հենց դա եղավ, որ կիտրոնը բոլորից խռովեց և այնքան սրտնեղեց, որ այդքան թթվաշ դարձավ: Իսկ թե դա ինչպես պատահեց, հիմա ես ձեզ մանրամասն կպատմեմ:



Ստացվեց այնպես, որ շատ տարիներ առաջ կիտրոնը և նարինջը մրցակցում էին միմյանց հետ: Ախր երկուսն էլ շատ գեղեցիկ էին, լուսերես ու միշտ էլ իրենց վառվռուն գույներով առանձնանում էին ծառերի կանաչ տերևներից: Միայն ի սկզբանե կիտրոնը մի քիչ նախանձում էր նարնջին, որ աճում էր փոքր-ինչ բարձր ծառերի վրա, քան ինքը: Բայց դա դեռ բոլորը չէր...

Օրերից մի օր ցուրտ երկրներում ապրող մարդիկ

որոշեցին կիտրոն աճեցնել հենց իրենց բնակարաններում: Բանն այն էր, որ կիտրոնը, ինչպես և նարինջը, ջերմասեր բույս է և չի կարող աճել ցուրտ վայրերում: Նրանք սիրում են պայծառ արև, տաք եղանակ և այնքան են սիրում, որ կարող են նույնիսկ տարվա մեջ երկու անգամ և ավելի բերք տալ: Իսկ, այ, ցուրտ երկրներում նրանք չէին աճում, և մարդիկ որոշեցին կիտրոնին տանել իրենց բնակարան և այնտեղ աճեցնել մեծ ծաղկամանների մեջ, որպեսզի գոնե մի քանի հատ ունենային տարվա ընթացքում: Դա հնարավոր էր անել, որովհետև կիտրոնի ծառը շատ մեծ չէր և կարելի էր այն խնամել բնակարանում: Ու հենց այստեղից էլ սկսվեց կիտրոնի և նարնջի վեճը…

Ապրելով մարդկանց հետ համատեղ մի բնակարանում՝ կիտրոնը սկսեց ուշի ուշով հետևել նրանց կենցաղին և բացահայտեց շատ բաներ, որը չէր կարող անել՝ ապրելով բնության մեջ:

Այսպես, ընտանիքի անդամները հավաքվում էին սեղանի շուրջ օրը երեք անգամ ու նախաճաշում, ճաշում և ընթրում էին: Եվ, այ քեզ զարմանք, յուրաքանչյուր անգամ նրանք կիտրոն էին օգտագործում, իսկ դա բնավ չէր ուրախացնում բնակարանում աճեց-ված և ծառից կախված կիտրոնին, որը ուշի ուշով հետևում էր այդ ամենին:



Նրա համար անգամ վիրավորական էր, որ



մարդիկ իրեն օգտագործում էին հենց այն ձևով, ինչին որ ականատես էր լինում: Նարնջի համեմատ, նա սեղանին կարծես երկրորդական էր: Եթե նարնջին գեղեցիկ շարում էին բյուրեղապակյա գեղեցիկ մրգամանների մեջ, ապա կիտրոնը այդտեղ չէր էլ երևում: Փոխարենը, կիտրոնին սեղանին կտրտած էին մատուցում, փոքրիկ և անշուք ափսեների մեջ: Եվ, այ քեզ զարմանք, մարդիկ կտրտած կիտրոնը նույնիսկ չէին ուտում, այլ պարզապես գցում էին թեյի մեջ կամ էլ մզում էին ձկան ու այլ ճաշատեսակների վրա:

Թե որտեղից էր այդ երկրորդական վերաբերմունքը իր հանդեպ, կիտրոնն այդպես էլ չէր կարողանում հասկանալ: Եվ ահա մի օր, երբ նարինջն ու կիտրոնը միասին հայտնվեցին բնակարանի սառնարանում, նրանց միջև վեճ ծագեց:

- Ես չեմ հասկանում, թե ինչու դու պետք է տեղ գտնես գեղեցիկ ու ճենապակյա մրգամաններում, իսկ ինձ այնքան արհամարհեն, որ տեսքս փչացնեն ու կտրտված տեսքով մատուցեն անշուք ափսեներով,- ասաց կիտրոնը:

- Իսկ ինչ կա չհասկանալու,- պատասխանեց նարինջը,- տես, թե ինչ գեղեցիկ տեսք ունեմ, թշիկներս ուղղակի փայլում են, իսկ դու ու՞մ ես պետք քո դեղնած դեմքով, որ սեղանին երևաս:

Քեզ միայն մարդիկ հիշում են, երբ հարբուխ են ունենում կամ մրսածություն և ոչ թե հաճույքով են ուտում, ինչպես ինձ, այլ որպես դեղ են օգտագործում:

- Բայց իմ դեղնած ու դալուկ տեսքը ի՞նչ կապ ունի,- պատասխանեց կիտրոնը,- բա հա՞մը, ես էլ յուրահատուկ համ ու հոտ ունեմ, ինչո՞ւ դրա մասին չես խոսում:

- Այո, դու քո համով տարբերվում ես ինձնից,- ասաց նարինջը,- բայց միևնույն է, մարդիկ քեզ չեն կարողանում հաճույքով ուտել, ինչպես ինձ, և փոխարենը քեզ քամում են և որպես հյութ օգտագործում:

- Արի այսօր մի փորձ անենք, և ես քեզ հետ միասին գաղտնի սողոսկեմ մրգամանի մեջ, տեսնենք, թե մարդիկ ինձ հետ ինչպե՞ս կվարվեն,- որոշեց կիտրոնը:

Այդպես էլ արեցին, երեկոյան ընթրիքին սեղանին դրվեց մի գեղեցիկ ճենապակյա մրգաման, որտեղ խնձորներ, նարինջներ և տանձեր էին շարված: Իսկ կիտրոնը գաղտնի սողոսկել էր այնտեղ և թաքնվել մրգերի հետևում: Եվ, ա՛յ քեզ զարմանք, մարդիկ հենց նկատեցին կիտրոնը, իսկույն նրան հանեցին մրգամանից՝ բացականչելով.

- Այս ով է սխալմամբ կիտրոնը դրել մրգամանի մեջ: Նրա տեղը այստեղ չէ, տարեք խոհանոց և կտրտված բերեք ափսեով. թեյի մեջ կգցենք:

Կիտրոնն այնքան սրտնեղեց մարդկանց այս վերաբերմունքից ու խռովեց, որ ներքին վրդովմունքից էլ ավելի թթվեց ու դարձավ չափազանց թթվաշ միրգ, որը մինչև հիմա մենք հաճույքով օգտագործում ենք:

Հետո ինչ, որ թթվաշ է, իսկ թե որքան օգտակար, դուք հո գիտեք, իմ սիրելի երեխաներ:

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԴԵՂՁԻ ԿԵՂԵՎԸ ՓՇՈՏՎՈՒՄ

Երևի նկատած կլինեք, որ մայրիկները սեղանին երկու տեսակ դեղձ են դնում՝ պճղովի և փշոտ: Նույնիսկ կան մարդիկ, որոնք խուսափում են անգամ փշոտ դեղձին մատով իսկ դիպչել, չնայած որ այն շատ համեղ է: Իսկ թե ինչո՞ւ է դեղձը փշոտվում, հիմա ես ձեզ կպատմեմ:

Հեռու-հեռու ժամանակներից սկսած, դեղձերը միշտ էլ իրենց հպարտ դիրքն ունեին պտուղների շրջապատում: Չէ՞ որ նրանք շատ գեղեցիկ էին տարվա բոլոր եղանակներին: Այ, երբ գարնանը ծաղկում էին ծառերը, ամենից գեղեցիկը դեղձենին էր՝ իր վարդագույն ծաղիկներով, իսկ երբ գալիս էր աշունը, բոլոր հասունացած դեղձերը դառնում էին կարմրաթուշ և այնքան գեղեցիկ ու տռուզ, որ պարզապես անհնար էր նրանց կողքով անտարբեր անցնելը:



Իսկ ամեն անգամ, երբ չարաճճի երեխաները ծառերի վրա դեղձ էին տեսնում, ոչ միայն հիանում էին նրանց գեղեցկությամբ, այլև անխնա պոկում էին ծառերից, առանց հասկանալու, որ դեղձերը դեռևս հասունացած չեն և չի կարելի դրանք պոկել:

Այս երևույթից շատ էր զայրանում դեղձենին:

Չէ՞ որ ամբողջ տարի չարչարվում էր և իր ճյուղերի վրա դեղձեր էր աճեցնում, որ աշնանը, բերքահավաքին մարդիկ դրանք հավաքեն և համեղ կոմպոտներ ու չիր սարքեն: Էլ չեմ ասում, թե որքան հյութեղ էին հասունացած դեղձերը հենց ուտելու համար: Բայց արի ու տես, որ գյուղի չարաճճի երեխաներն այդ չէին հասկանում և անխնա քաղում էին խակ դեղձերն ու դեն շպրտում:

Դե, իհարկե, այս իրավիճակը դժվար հանդուրժելի էր դեղձենու կողմից, որը իմաստուն ծառ էր և միշտ ծանր ու դժվար օրերին մի ելք էր գտնում: Այ, օրինակ, մինչ այդ, երբ բերքը շատ էր լինում, մարդիկ սկսում էին չուտել դեղձը և այն երկու կես անելով, միայն հանում էին կուտը ու օգտագործում գաթա թխելիս: Իսկ արդյոք գիտե՞ք, սիրելի երեխաներ, որ դեղձի կուտն առաջներում շատ համեղ էր, ինչպես ծիրանինը: Դեղձենին չէր սիրում, որ իր պտուղը քաղում են միայն կուտը ճաշակելու համար, և այդ պատճառով մի հնարամիտ քայլ արեց. ուղղակի իր կուտը դարձրեց չեչոտ և դառը, ինչպես հիմա է, որպեսզի մարդիկ այլևս այն չուտեն:

Իսկ հիմա դեղձենին մի նոր խնդրի առաջ էր կանգնած: Ինչպե՞ս անել, որ երեխաները չպոկեն խակ պտուղները: Եվ, պատկերացնու՞մ եք, ելքը գտնվեց: Երբ չարաճճիները մոտենում էին դեղձենուն և ցանկանում էին պոկել անհաս պտուղները, դեղձենին դրանց կեղևը իսկույն դարձնում էր փշոտ, որից հետո երեխաներն այլևս չէին ցանկանում դիպչել փշոտված դեղձերին:

Դե, իհարկե, մինչև հասունանալն այդ դեղձերը մնում էին իրենց նախկին փշոտ կեղևով: Իսկ եթե չարաճճիները չէին մոտենում դեղձի ծառերին, դրանց վրա աճող պտուղների կեղևները չէին փշոտվում, ու այդ դեղձերը մարդիկ անվանում էին պճղովի, քանի որ դրանց կեղևները հեշտությամբ կլպվում էին:

Ահա թե ինչու, մինչև այսօր աշնանը մեր սեղանին երկու տեսակի դեղձ է հայտնվում՝ պճղովի և փշոտ: Չգիտեմ դուք ինչպես, բայց ես երկուսն էլ շատ եմ սիրում:

ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՆՌԱՆ ՀԱՏԻԿՆԵՐՆ ԱՅԴՔԱՆ ՇԱՏ

Նուռը զարմանահրաշ պտուղ է. այն ոչ միայն շատ գեղեցիկ է, այլև ունի յուրահատուկ կառուցվածք: Երբ ճեղքում ես նռան հաստ կեղևը, այնտեղ մեծ քանակի կարմրավուն հատիկներ ես տեսնում, որոնք շատ համեղ են: Մարդիկ միշտ էլ զարմացել են այդ երևույթի վրա և սկսել են վիճել, թե քանի հատիկ կա նռան մեջ: Իսկ ես գիտեմ, թե քանի հատիկ ունի նուռը, քանի որ դրա մասին մի շատ գեղեցիկ հեքիաթ կա, որն ուզում եմ ձեզ պատմել:

Ժամանակին նռնենիները և եղևնիները ապրում էին կողք կողքի և



ընկերություն էին անում միմյանց հետ: Աշնանը, երբ նուռը հասունանում էր, եղևնուն ասում էր.

- Տե՛ս, թե ինչ գեղեցիկ եմ ես: Նռան հասուն և կլոր պտուղներն ավելի շքեղ տեսք են հաղորդում ինձ, և բոլորն այդ նկատում են: Բայց դու էլ քո առավելությունն ունես, իմ սիրելի եղևնի: Տարին տասներկու ամիս կանաչ ես մնում: Այ, օրինակ, երբ գալիս է ձմեռը, և անտառում ոչ մի ծառի վրա տերևներ չեն լինում, դու քո կանաչ և փշոտ տերևներով զարդարում ես մեր շրջապատը:



- Դու ճիշտ ես, իմ սիրելի բարեկամ,- միշտ նույն պատասխանն էր տալիս եղևնին,- բայց միևնույն է, քո աշնանային գեղեցկությունը ոչ մի ծառ չունի:

Այսպես, անընդհատ փոխադարձաբար միմյանց գովերգում էին նուռն ու եղևնին, մինչև որ այդ զրույցին միացավ նաև ճնճղուկը:

- Հարազատներս, ախր դուք ծառեր եք, ձեր արմատներով ամուր կպած եք հողին և չեք կարողանում շրջագայել և աշխարհ տեսնել: Իսկ ես թռչում եմ անտառից դուրս, դեպի մարդկանց բնակավայրեր, և գիտե՞ք, թե Ամանորին ինչ եմ տեսնում: Մարդիկ իրենց բնակարաններում եղևնին զարդարում են և դարձնում տոնածառ: Ախր դուք չեք պատկերացնում, թե ինչ գեղեցկություն ունի տոնածառը էլեկտրական լույսերով, փայփլուն խաղալիքներով: Այն շատ ավելի գեղեցիկ է, քան նռնենին բերքահավաքին: Իսկ երբ նրա շուրջը երեխաներ են հավաքվում, պարում ու երգում,



միջավայրն էլ ավելի հիասքանչ ու հեքիաթային է դառնում:

Եվ ահա, ամանորյա տոներին ընդառաջ, մարդիկ եկան անտառ, կտրեցին եղևնուն ու տարան իրենց տուն: Նռնենին մնաց միայնակ ու շատ տխրեց ընկերոջ համար: Այդ միամիտ ծառը կարծում էր, որ երբ վերջանան ամանորյա տոները, մարդիկ ետ կբերեն եղևնուն և նորից կտնկեն իր կողքին:

Բայց, ավաղ, ձմեռը մոտենում էր ավարտին, և եղևնին չկար ու չկար: Ու մի օր էլ հանկարծ նռնենին նկատեց իր կողքով թռչող հենց այդ նույն ճնճղուկին, որը պատմում էր տոնածառի մասին:

- Իմ սիրելի բարեկամ,- ասաց նա,- դու բարձրից ես թռչում և նայում ես հեռուները, արդյոք տեսե՞լ ես եղևնուն, ախր շատ ուշացավ, կարոտից էլ չեմ դիմանում:

Ճնճղուկը հասկացավ, որ միամիտ նռնենին չգիտի, որ մարդիկ Ամանորից հետո տոնածառ եղևնիներին ոչ թե բերում են անտառ, այլ նրանց վրայից հանելով զարդերն ու գույնզգույն խաղալիքները՝ ուղղակի դեն են նետում փողոց կամ գցում են վառարանի մեջ: Ու ճնճղուկը որոշեց այդ մասին չհայտնել նռնենուն, որ վերջինս չվշտանա՝ փորձելով մխիթարական խոսք ասել.

- Գեղեցկուհի նռնենի, միգուցե եղևնին այդքան շուտ



չվերադառնա. նրան շատ հեռու են տարել, երկար ճանապարհ ունի անցնելու,- ասած նա:- Դու առնվազն պետք է մեկ տարի սպասես:

- Իսկ մեկ տարին շա՞տ երկար ժամանակ է,- հարցրեց նռնենին:

- Ընդամենը 365 օր,- պատասխանեց ճնճղուկը ու թռավ, հեռացավ:

Այդ պահից սկսած՝ նռնենին սկսեց օրերը հաշվել՝ ուշի ուշով նայելով ճանապարհին: Իսկ երբ օրն ավարտվում էր, ու եղևնին չէր գալիս, ծառը հառաչում էր, և կարոտի մի արցունք էր գալիս նրա աչքերից: Եվ, գիտե՞ք, ամեն մի արցունք այնքան կարոտալի էր, որ կարծրանում ու դառնում էր նռան մեկ հատիկ: Ու երբ աշնանը սպասման մեկ տարին ավարտվում էր, նռան ներսում արդեն հավաքվում էր արցունքներից ստեղծված 365 հատիկ, ճիշտ այնքան, որքան տարվա օրերն էին:

Ահա թե ինչու են նռան հատիկներն այդքան շատ. չէ՞ որ դրանք կարոտած ընկերոջ վերադարձի համար թափված արցունքներ էին՝ այդքան վճիտ ու գեղեցիկ:

Դե, իհարկե, մարդիկ երբ իմացան այս տխուր պատմության մասին, սկսեցին այլևս եղևնիներ չկտրել, և Ամանորին, որպես տոնածառ, արդեն արհեստական եղևնի էին զարդարում: Դրանից հետո նռնենին և եղևնին նորից կողք կողքի ընկերներ դարձան և սկսեցին երջանիկ ապրել, բայց միևնույն է, նուռը պահպանեց իր հին սովորույթը ու մինչև հիմա էլ աճում է քաղցրահամ կարմիր հատիկներով, որոնք տարվա օրերի քանակն ունեն:

ԹԵ ԻՆՉՈՒ ՏԱՆՁՆ ԻՐԵՆ ՀԱՏՈՒԿ ՁԵՎ ԸՆՏՐԵՑ

Կար մի ժամանակ, երբ տանձերը կլոր էին աճում, ինչպես դեղձերը կամ խնձորները: Բայց օրերից մի օր տանձերը որոշեցին փոխել իրենց արտաքին տեսքը և դառնալ «տանձանման», իսկ թե ինչու, հիմա ես ձեզ կպատմեմ:



Տանձերը մրգերի մեջ միշտ էլ առանձնանում էին իրենց հետաքրքրասիրությամբ: Նրանք այնքան հետաքրքրասեր էին, որ ամեն անգամ հարցուփորձ էին անում ծառի տերևները շարժող քամուն, թե ինչ կա-չկա աշխարհում, հարցեր էին ուղղում ծառերին թառած թռչուններին, թե որտեղի՞ց են գալիս և ուր են գնում: Նույնիսկ հանգիստ չէին թողնում թրթուռներին՝ հարցնելով, թե ինչու են ուտում ծառի տերևները կամ կեղևը:



Իհարկե, այս հետաքրքրասիրությունը դուր չէր գալիս ոչ ոքի: Կարելի՞ էր, չէ՞, մեկ կամ երկու անգամ հարցնել, բայց ոչ թե անընդհատ նույն հարցերը տալ և ձանձրացնել շրջապատին: Եվ թռչունները, քամին և անգամ թրթուռները խուսափում էին խոսքի բռնվել տանձերի հետ՝ չսիրելով դրանց շատախոսությունը:

Սակայն ոչ ոք չէր ուզում հասկանալ տանձերին: Ախր նրանք ամուր կպած էին տանձենու ճյուղերին և չէին կարողանում ճամփորդել, կամ գոնե շարժվել և հասկանալ, թե ինչ կա իրենց շրջապատում: Միակ բանը, որ տանձերը տեսնում էին իրենց շուրջը, հարևան խնձորենիներն էին, որոնք նույնպես խուսափում էին խոսքի բռնվել հարցասեր տանձերի հետ:

- Գիտե՞ք, սիրելի խնձորներ, մենք քույրեր և եղբայրներ ենք,- ասում էին տանձերը,- բոլորս կլոր ենք և հասունանում ենք միևնույն ժամանակ: Տեսնես մենք տարբեր համե՞ր ունենք, թե՞ նույն համի ենք: Ի՞նչ եք կարծում, մարդիկ ի՞նչ են շատ սիրում՝ տա՞նձ թե՞ խնձոր...

Ահա այսպես, ամեն օր, տանձերն իրենց բազում հարցերով հոգնեցնում էին հարևան ծառին աճող խնձորներին: Այնքան էին հոգնեցնում, որ խնձորները պատճառ էին որոնում խռովելու և էլ չխոսելու տանձերի հետ: Իհարկե, այս ամենից վրդովվում էին տանձերը, բայց միևնույն է՝ նրանց հետաքրքրասիրությունը չէր մարում:

Օրերից մի օր տանձենու ճյուղին թառեց արծիվը: Տեսնելով թռչունների արքային՝ տանձը որոշեց գանգատ անել և խորհուրդ հարցնել, թե ինչպես դուրս գա ստեղծված իրավիճակից:

- Թագավորն ապրած կենա: Ինձ մի խորհուրդ տուր, թե ինչ անեմ,- ասած տանձը:- Ես շատ եմ հետաքրքրասեր և ուզում եմ ամեն ինչ իմանալ, բայց չեմ կարողանում ճամփորդել, որովհետև ամուր կառչած եմ տանձենու ճյուղից: Իսկ երբ ուզում եմ ուրիշներից իմանալ, թե ինչ կա-չկա աշխարհում, նրանք ինձ շատախոս են համարում և երես են թեքում ինձնից: Հիմա ինչպես վարվեմ, ինքս էլ չգիտեմ:

Իմաստուն թագավորը հասկացավ, որ տանձի շատախոսությունն ու հետաքրքրասիրությունը սահման չունեն, և մի խելամիտ խորհուրդ տվեց:

- Գիտես ինչ, սիրելի՛ տանձ, - պատասխանեց արծիվը, - պետք չէ անպայման ճամփորդել և այդպես ճանաչել աշխարհը: Այ, դու ապրում էս բարձր ծառերի վրա, ուրեմն ինչու՞ չես երկարացնում վիզդ դեպի վեր և բարձունքից դիտում քո շրջապատը: Այդպես դու կարող էս շատ բան տեսնել, քան հիմա:

- Իսկ ես վիզ չունեմ, որ ձգեմ վեր և բարձունքից դիտեմ ինձ շրջապատող աշխարհը, չես տեսնում, որ կլոր եմ,- ասաց տանձը:

- Եթե քեզ մի քիչ նեղություն տաս և ամբողջ օրը փորձես մարմնով ձգվել վեր ու վեր, վիզ էլ կունենաս, երկար պոչ էլ,- պատասխանեց արծիվը և արագ թռավ երկինք, որպեսզի չլսի հետաքրքրասեր տանձի շատախոսությունը:

Եվ, պատկերացնու՞մ եք, սիրելի երեխաներ: Մինչև այսօր հետաքրքրասեր տանձը փորձում է իր վիզը ձգել վեր ու վեր, որպեսզի այնտեղից դիտի աշխարհը: Ու հենց այդ պատճառով տանձը իր մարմնի ներքևի մասով մնաց կլոր, ինչպես խնձորներն են, իսկ վերևի մասում վզիկ հայտնվեց՝ երկար պոչով, և այդպես դարձավ տանձաձև:





Ճուղուր Երևանցի

Թե ինչու...

Հեքիաթներ կենդանիների մասին

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ

ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ԳԵՏԱՁԻԵՐԸ ՓՈՔՐԻԿ ԱԿԱՆՋՆԵՐՈՎ

Կար մի ժամանակ, երբ գետաձիերն իրենց խոշոր մարմնին համահունչ՝ ունեին մեծ ականջներ: Հա՞... հա.., այնքան մեծ, ինչպես փղերինը: Իսկ դուք գիտեք, սիրելի երեխաներ, թե ինչու այդ մեծ ականջներն այնքան փոքրացան, որ հիմա հազիվ են երևում գետաձիերի վրա: Եթե չգիտեք, հիմա կպատմեմ...

Գետաձիերը և կոկորդիլոսները միշտ էլ ապրել են ջրառատ և տաք գետերում և ժամանակին այնքան էլ համերաշխ չէին, ինչպես հիմա: Իսկ նրանց վեճի պատճառը հենց գետաձիերի մեծ ականջներն էին:



Բանն այն էր, որ գետաձիերը, չնայած իրենց ծանրաքարշ մարմնին, ձուկ էին որսում և դրանց պակասի դեպքում՝ անգամ սնվում էին ջրիմուռներով: Իսկ, այ, չարաճճի կոկորդիլոսները, որոնք ծույլ էին և չէին ցանկանում չարչարվելով գետում ձուկ որսալ, համարյա միշտ քաղցած էին: Այնքան

էին քաղցած մնում, որ սովից նրանց աչքերը մթագնում էին ու հաճախ գետաձիերի ականջները շփոթում էին դանդաղ լողացող ձկների հետ:

Դե, երեխաներ, ինքներդ եք հասկանում, թե ինչքան համեղ և հյութալի պետք է թվային գետաձիու խոշոր ականջները քաղցած կոկորդիլոսներին, և այդ պատճառով նրանք երբեք առիթը բաց չէին թողնում՝ հարձակվելու և քաշքշելով պոկելու ջրում լողացող այդ հյութեղ պատառները:

Դե, իհարկե, գետաձիերը չէին կարող երկար հանդուրժել այս իրավիճակը: Մի կողմից, նրանք շատ ծիծաղելի էին առանց ականջների, իսկ մյուս կողմից, վատ էին լսում, քանի որ ինքներդ եք հասկանում՝ ականջները հենց լսելու համար են: Հանուն ճշմարտության պետք է ասեմ, որ կոկորդիլոսների դեմ պայքարելն այնքան էլ հեշտ չէր: Նրանք խոշոր երախ և մեծ ատամներ ունեին և հեշտությամբ էին պոկում գետաձիերի ականջները: Բացի այդ, կոկորդիլոսները ջրում շատ արագաշարժ էին, և նույնիսկ ուժեղ գետաձիերը չէին կարողանում նրանց բռնել ու մի լավ դնգստել:

Եվ ահա մի օր գետաձիերը հավաքվեցին ժողովի, որպեսզի որոշեն, թե ինչպես դուրս գան այդ հիմար իրավիճակից: Նրանցից մեկը առաջարկեց.

Եկեք բոլորս դուրս գանք գետից և ապրենք անտառում: Այնտեղ կոկորդիլոսներ չկան, և մեր ականջներին էլ ոչ ոք չի դիպչի:

Բայց այդ առաջարկը մերժվեց, քանի որ գետաձիերը չեն կարող սնվել անտառում. այնտեղ ո՛չ ձուկ կա, և ո՛չ էլ ջրիմուռ: Եվ ահա, հանկարծ մի խելոք գետաձի ասաց.

- Հարևան գետի հատակում կախարդական տիղմ կա: Ես միշտ իմ վերքերն այդ տիղմով եմ բուժում, և եթե այն քսենք մեր պոկված ականջներին, դրանք անպայման նորից կաճեն: Եկեք բոլորս հավաքվենք և գնանք այնտեղ:

Գետաձիերն այդ լսելուն պես սկսեցին խմբերով լողալ դեպի

այդ կախարդական գետը, որտեղ հերթով սուզվելով հատակը՝ կուտակված տիղմով շփում էին իրենց վերքերը: Եվ, այ քեզ հրաշք… Պոկված ականջների տեղը սկսեցին նոր ականջներ աճել, բայց իրականում շատ փոքրիկ, այնքան փոքրիկ, որ հազիվ էին երևում խոշոր գետաձիերի վրա:

Իհարկե, սկզբնական շրջանում գետաձիերին այնքան էլ դուր չէին գալիս իրենց փոքրիկ ականջները, բայց հետո նրանք հասկացան, որ հենց այդ ականջներն են իրենց հարմար: Չէ՞ որ արդեն փոքրիկ ականջները նկատելի չէին կոկորդիլոսների համար, ու այդ պատճառով չարաճճիներն էլ չէին հարձակվում գետաձիերի վրա:

Անցան տարիներ, և գետաձիերն սկսեցին այլևս փոքրիկ ականջներով ծնվել և մինչև այսօր էլ ջրառատ և տաք գետերում հաշտ ու խաղաղ ապրում են կոկորդիլոսների հետ:



ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՓՂԵՐԸ ԵՐԿԱՐԱՔԻԹ

Սիրելի՛ երեխաներ, արդյոք դուք գիտեք, թե ինչու են փղերը երկարաքիթ: Բանն այն է, որ վաղուց, շատ վաղուց փղերն այսքան երկար քթեր կամ կնճիթներ չեն ունեցել: Սովորականի պես, նրանց քիթը կարճ է եղել, հետո է դարձել կնճիթ, իսկ թե ինչու, հիմա ես ձեզ կպատմեմ:

Նախորդ հեքիաթից դուք հիշում եք չարաճճի կոկորդիլոսներին, որոնք ապրում էին ջրառատ գետերում: Ահա հենց այդ գետերից էլ փղերը ջուր էին խմում՝ հագեցնելով իրենց ծարավը: Սկզբում ամեն ինչ լավ էր. նրանց ոչ ոք չէր նեղացնում: Չէ՞ որ փղերը խոշորամարմին են, շատ ուժեղ, և այդ իսկ պատճառով մյուս կենդանիները միշտ էլ խուսափում են նրանց հետ կռվի բռնվել:



Բայց փղի ձագուկները, որոնք դեռ փոքր էին ու տկար, անպաշտպան էին, որի պատճառով էլ միշտ իրենց մայրիկների հետ էին շրջում տափաստաններում: Եվ ահա մի օր փղիկներից մեկը որոշեց առանձնանալ հոտից և միայնակ գնալ գետ՝ ջուր խմելու:

Իսկ դուք, սիրելի երեխաներ, արդեն նախորդ հեքիաթից գիտեք, որ չարաճճի կոկորդիլոսներն այլևս չէին հետապնդում գետաձիերին և պոկում նրանց ականջները: Դե, ուրեմն էլ ի՞նչ էր մնում նրանց. պարզ է, արկածներ որոնել ոչ միայն ջրում, այլև՝ գետափին:

Եվ պահը չուշացավ: Այն միայնակ փոքրիկ փղիկը, որ կանգնած էր գետի ափին և իր կարճլիկ քիթը մտցրել էր ջրի մեջ ու հագեցնում էր ծարավը, նույնիսկ չէր էլ նկատել, թե ինչպես գետի մեջտեղից աննկատ լողալով, իրեն է մոտենում չարաճճի կոկորդիլոսը: Իսկ թե դրանից հետո ի՞նչ կատարվեց…

Դուք միանգամայն իրավացի եք, սիրելի՛ երեխաներ: Կոկորդիլոսն իր մեծ երախով և սուր ատամներով ուղղակի բռնեց փղիկի՝ ջուրը մտցրած քիթը և սկսեց խեղճին մեծ ուժով քաշել գետը:

- Օգնեցե՛ք, օգնեցե՛ք,- բացականչում էր խեղճ փղիկը: Նա այնքան թույլ էր, որ չէր կարողանում կանգնեցնել կոկորդիլոսին և չնայած ոտքերը ավազի մեջ մտցրած դիմադրում էր, բայց մեկ է՝ կոկորդիլոսը քթից բռնած՝ նրան աստիճանաբար դեպի գետն էր քաշում:

Փղիկի օգնության ձայնն իսկույն լսեցին մեծ փղերը և ճիշտ ժամանակին վրա հասան: Մայր փիղն առջևի ոտքերով գրկեց իր ձագուկին և սկսեց մեծ ուժով հետ քաշել գետից դեպի ցամաք: Սակայն մյուս կողմից էլ, փղիկի քիթը բռնած, կոկորդիլոսը նրան դեպի ջուրն էր քաշում:

Դե, իհարկե, մայր փիղը ուժեղ էր և պետք է հաղթեր կոկորդիլոսին, որն էլ ի վերջո բաց թողեց փղիկի քիթը և սուզվեց ջրի հատակը: Այդ քաշքշոցի հետևանքով երկարեց փղիկի քիթը և դարձավ կնճիթ, որը շատ անսովոր էր դեռևս կարճաքիթ փղերին և անգամ փոքր-ինչ ծիծաղելի: Բայց հետո բոլոր փղերը հասկացան, որ կնճիթ ունենալը շատ հարմար է սնվելու, լողանալու և նույնիսկ ջուր խմելու համար:

Եվ տարիներ անց բոլոր փղերն սկսեցին ծնվել երկարաքիթ, այսինքն՝ կնճիթներով, ու հիմա այնքան երջանիկ են ապրում, որ նույնիսկ չեն էլ հիշում, որ իրենց նախնիները կնճիթ չեն ունեցել:

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԿՈԿՈՐԴԻԼՈՍԻ ԿԱՇԻՆ ԱՆՀԱՐԹ

Սիրելի՛ երեխաներ, նախորդ հեքիաթներում պատմեցինք չարաճճի կոկորդիլոսների մասին, իսկ հիմա եկեք պարզենք, թե ինչու են նրանք այդքան չարաճճի: Եթե դուք արդեն նկատել եք, կոկորդիլոսները շատ հետաքրքիր կաշի ունեն: Նրանց կաշին հարթ չէ և նաև փոքր-ինչ տարօրինակ է: Իսկ թե ինչու է այդպես, ես հիմա ձեզ այդ մասին կպատմեմ:

Կոկորդիլոսները ձու են դնում գետափի տաք ավազների մեջ, որտեղից էլ ծնվում են իրենց ձագուկները: Բայց քանի որ կոկորդիլոսներն իրենց չարաճճիությամբ միշտ անհանգստացնում էին մնացած կենդանիներին, վախենում էին, որ բոլորը նույն կերպ կվարվեին իրենց ձագուկների հետ: Հենց այդ պատճառով մայր կոկորդիլոսները ձվից դուրս եկած իրենց ձագուկներին չէին թողնում միայնակ գետափի ավազներին, այլ անմիջապես տեղափոխում էին ջրի մեջ: Իսկ գիտե՞ք, թե ինչ տարօրինակ ձևով էին այդ անում: Ուղղակի ձագուկներին դնում էին իրենց մեծ երախի մեջ և, սուր ատամներով բռնելով, տեղափոխում էին գետափից դեպի ջուրը:

Իսկ բոլոր ձագուկներն ունեին նուրբ և փափուկ կաշի, որոնք անհարթ էին դառնում, երբ ընկնում էին մայր կոկորդիլոսի սուր ատամների տակ: Ու ստացվում էր այնպես, որ փոքրիկ կոկորդիլոսների հարթ կաշին մի տեսակ ճմրթվում էր ու դառնում անհարթ ծնվելու հենց առաջին իսկ օրվանից, որի մեղավորները հենց մայրիկներն էին:

Դե, իհարկե, երբ նրանք մեծանում և իրենք էլ դառնում էին հայրիկներ ու մայրիկներ, դեռևս պահպանում էին այդ տարօրինակ կաշին և չէին հրաժարվում դրանից. իսկ գիտե՞ք, թե ինչու…

Բանն այն է, որ կոկորդիլոսներն այդ տեսքով վախեցնում էին մյուս կենդանիներին և այդպես շարունակում էին իրենց չարաճճիությունը: Բայց մի շատ կարևոր առավելություն էլ ուներ այդ անհարթ կաշին…

Կոկորդիլոսները շատ մրսկան էին: Նրանք տաք օրերին դուրս էին գալիս գետափ, ժամերով պառկում ավազի վրա և իրենց կաշվի անհարթ փոսիկներում հավաքում արևի ջերմությունը: Իսկ հետո, մտնելով ջուրը, այն օգտագործում էին և դառնում ավելի արագաշարժ: Եվ ստացվում էր այնպես, որ իրենց կաշվի տաքության շնորհիվ նրանք այլևս գետում լողալիս չէին մրսում և նույնիսկ ավելի կայտառ էին դառնում:

Ահա թե ինչու, սիրելի՛ երեխաներ, կոկորդիլոսները մինչև այսօր չհրաժարվեցին իրենց անհարթ կաշվից և դեռ շարունակում են իրենց չարաճճիությամբ գետերում լողացող մյուս կենդանիների հոգին հանել:



ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ԱՐՋԵՐԸ ԾՈՒՌԹԱԹ

Դուք նկատած կլինեք, որ աշխարհի բոլոր արջերը ծուռթաթ են: Նրանք կարծես ծուռ-ծուռ են քայլում և վազում, լինեն դրանք մեր անտառների գորշ արջերը, թե Սառուցյալ օվկիանոսի հյուսիսային սպիտակ արջերը: Բայց կար մի ժամանակ, երբ բոլոր արջերն ուղիղ էին քայլում, իսկ թե ինչու նրանք «ծուռթաթ» դարձան, ես հիմա ձեզ կպատմեմ:

Արջերը ոչ միայն շատակեր կենդանիներն են, այլև ամենակեր են: Գորշ արջերը, որոնք ապրում են անտառում, ուտում են միս, բանջար և ամենից շատ չորացած հատապտուղներ են սիրում: Իսկ հյուսիսի սպիտակ արջերը ձուկ են որսում սառած օվկիանոսի ջրերում: Բայց հո բոլորս էլ գիտենք, որ արջերն ինչքան ուտում են, էլի չեն կշտանում, քանի որ ձգտում են իրենց մորթու տակ հավաքել ճարպի հաստ շերտ, որ ձմռանը չմրսեն:

Օրերից մի օր նրանք հասկացան, որ եթե ծուռթաթ դառնան, ավելի հեշտ ուտելիք կգտնեն, և ահա թե ինչու…

Հյուսիսի սպիտակ արջերը, որոնք շատ վաղ ժամանակներում դեռ ծուռթաթ չէին, դժվարությամբ էին ձուկ որսում օվկիանոսում, քանի որ ջուրը դառնում էր սառույց, իսկ ձկները լողում էին սառցե շերտերի տակ: Արջերն ստիպված անցքեր էին բացում սառույցների մեջ և, իրենց թաթերը մտցնելով անցքերի մեջ, ջրից ձկներ էին հանում: Բայց հո դուք գիտեք, սիրելի երեխաներ, որ ձկներն արագաշարժ են և խույս էին տալիս արջի թաթի ճանկերից:

Եվ, այ քեզ հրաշք, մի ծեր արջ, որ երիտասարդ տարիներին գլորվել էր սառցաբեկորից ու, վնասելով իրեն, ծուռթաթ էր դարձել, միշտ էլ հաջող որս էր անում: Նրա ծուռ թաթն այնպես էր որսում ձկներին, որ փախչելն ուղղակի անհնար էր: Եվ սպիտակ արջերը հասկացան, որ ծուռ թաթ ունենալն ավելի օգտակար է, և նրանց քոթոթները սկսեցին ծնվել ոչ թե ուղիղ, այլ ծուռ թաթերով:

Իսկ գորշ արջերին վերաբերող այլ պատմություն տեղի ունեցավ: Նրանք անտառում միշտ չորացած և քաղցր հատապտուղներ էին փնտրում: Իսկ չորացած հատապտուղները, սիրելի երեխաներ, հավաքում էին սկյուռիկները և պահում ծառերի խոր փչակներում, որպես ձմեռվա ուտելիքի պաշար: Գորշ արջերը այդ մասին լավ գիտեին և իրենց ուղիղ թաթերով փորձում էին հասնել փչակի խորքերը, բայց չէին կարողանում: Նրանցից մի քանիսին, ովքեր



ծուռ թաթ էին ծնվել, դա շատ լավ էր հաջողվում, քանի որ նրանց թաթերը կարծես շերեփ լինեին, որով շատ հեշտ էր փչակի խորքում պահեստավորված հատապտուղը դուրս բերել: Ճիշտ է, հանուն ճշմարտության պետք է ասենք, որ մնացած արջերը ծաղրում էին ծուռթաթերին, բայց ծուռթաթները չէին նեղանում, քանի որ, ի տարբերություն մյուսների, միշտ վայելում էին քաղցր և չոր հատապտուղներ:

Անցան տարիներ, և բոլոր գորշ արջերն էլ հասկացան, որ ավելի լավ է մի քիչ ծուռթաթ քայլել, բայց միշտ լինել կուշտ ու հատապտուղներով հագեցած: Եվ հենց այս պատճառով է, որ բոլոր արջերն այսօր ծուռթաթ են, որին մենք բոլորս սովորականի պես ենք նայում:

ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՎԱԳՐԱՁԻԵՐԸ ԳԾԱՎՈՐ

Շատ տարիներ առաջ վագրաձիերը գծավոր չէին, ինչպես հիմա, և սև գույն ունեին: Նրանք ապրում էին Աֆրիկայի տափաստաններում և սովորական սևուկ ձիեր էին, ինչպիսիք մենք ամենուր տեսնում ենք մեր գյուղերում: Բայց պետք է խոստովանեմ, սիրելի երեխաներ, որ սև գույնն այնքան էլ դուր չէր գալիս վագրաձիերին, և նրանք անընդհատ ուզում էին իրենց գույնը փոխել:

Իմ սիրելի՛ փոքրիկներ, դուք գիտեք արդյոք, որ Աֆրիկայի տափաստաններում ցերեկը շատ շոգ է, իսկ գիշերը՝ ցուրտ, և քիչ անձրևներ են լինում: Վագրաձիերն ամբողջ ցերեկ վազվզում էին, մրցում միմյանց հետ, բռնոցի, պահմտոցի խաղում և երբ շատ էին մնում արևի տակ՝ քրտնում էին ու շոգում, ինչը նրանց դուր չէր գալիս: Պատճառն այն էր, որ սև գույնը կլանում էր արևի ճառա-



գայթները և ավելի էր շոգեցնում վագրաձիերին:

Ցերեկային տապից հոգնած վագրաձիերը սպասում էին գիշերվան, որ զովն ընկնի ու մի քիչ հովանան: Բայց գիշերն էլ դուր չէր գալիս այդ կենդանիներին, քանի որ ցուրտ էր լինում, և սառը օդից մրսում էին: Բացի այդ, կեսգիշերին անհանգստացնում էին գիշատիչ կենդանիները, որոնք ցանկանում էին բռնել և վնասել անպաշտպան վագրաձիերին:

Մի անգամ ցերեկը սովորականի պես պահմտոցի խաղալիս մի ճարպիկ վագրաձի թաքնվեց սպիտակ ավազների մեջ: Խեղճը չգիտեր, որ այդ ավազները կախարդական են, և ով թաղվի դրանց մեջ՝ իսկույն կսպիտակի: Եվ, այ քեզ զարմանք, այդպես էլ եղավ: Կախարդական ավազների միջից դուրս գալուն պես, այդ չարաճճի վագրաձին նկատեց, որ լրիվ սպիտակել է և այլևս սև գույն չունի:

Նրա խաղընկերներն սկսեցին ծիծաղել սպիտակ ձիուկի վրա և նույնիսկ ծաղրել: Բայց սպիտակ ձիուկը դրանից շատ էլ չսրտնեղեց, քանի որ շուտով հասկացավ, որ այս ու այն կողմ վազվզելուց այլևս չի շոգում՝ նույնիսկ չի էլ քրտնում:

Բանն այն է, սիրելի երեխաներ, որ սպիտակ գույնով շատ հարմար է արևի տակ ման գալը, քանի որ հակառակ սևի, սպիտակը չի կլանում արևի ճառագայթները և անգամ դրանցից պաշտպանում է կենդանիներին:

Այդ հասկանալով՝ վագրաձիերի ամբողջ երամակը վազեց դեպի տափաստանի կախարդական սպիտակ ավազները, թաղվեց դրանց մեջ և ամբողջությամբ դարձավ սպիտակ: Սկզբից բոլորը երջանիկ էին, քանի որ ցերեկը իրենց շատ լավ էին զգում, այլևս սպիտակ գույնով չէին շոգում: Բայց ահա, երբ գալիս էր գիշերը, նրանք հասկանում էին, որ սպիտակ գույն ունենալը շատ վտանգավոր է, քանի որ հեշտ նկատելի էին դառնում իրենց թշնամի գիշատիչների համար: Դե, պարզ էր, որ բորենիները, լուսանները և առյուծներն սպիտակ վագրաձիերին ավելի հեշտ կգտնեին գիշերային մթության մեջ…

Եվ երբ լուսանում էր, վախից սարսափած վագրաձիերը այլևս չէին ուզում սպիտակ գույն ունենալ: Նրանք շտապում էին տափաստանի մեջտեղով հոսող տիղմոտ գետը, որը համարյա սև գույնի էր, լողանում այնտեղ և իրենց սպիտակ գույնը նորից սև դարձնում: Բոլորն ուրախանում էին դրանից, բայց նորից տխրում կեսօրին, երբ արևն հայտնվում էր երկրակամարում, և շոգն անտանելի էր դառնում:

Դե, պարզ էր, վագրաձիերն իսկույն վազում էին դեպի կախարդական սպիտակ ավազները և էլի սպիտակում, իսկ գիշերը մոտենալուն պես՝ լողանալով տիղմոտ գետում, նորից սևանում էին: Եվ այսպես շարունակ…

Այս իրավիճակը կրկնվեց մի քանի օր: Խեղճ ձիուկները ի վերջո չէին կողմնորոշվում, թե որ գույնն է իրենց ավելի հարմար՝ սևը, թե՞, սպիտակը: Սևը հարմար էր գիշերը, սպիտակը՝ ցերեկը, իսկ օրը մի քանի անգամ գույն փոխելն արդեն դառնում էր ձանձրալի:

Այդ պատճառով էլ նրանք օրերով վիճում էին. մի մասը պնդում էր մնալ սպիտակ գույնով, իսկ մյուս մասը՝ սևով: Եվ որպեսզի նրանցից ոչ մեկը չնեղանար, որոշեցին, որ աշխարհում ապրող բոլոր վագրաձիերը այսուհետ պետք է լինեն զոլավոր՝ սև և սպիտակ: Ու մինչև այսօր էլ վագրաձիերն իրենց որոշումը չեն փոխել:

ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ԸՆՁՈՒՂՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՎԻԶ

Ընձուղտները միշտ չէ, որ երակարավիզ են եղել: Ժամանակին նրանք բոլոր չորքոտանիների նման, ինչպես ձիերը, արջերը կամ գայլերը, ունեին ոչ այդքան երկար ոտքեր ու վիզ: Իսկ թե ինչպես նրանց ոտքերն ու վիզը երկարեցին, հիմա ես ձեզ կպատմեմ:

Ընձուղտները, ինչպես վագրաձիերը, նույնպես ապրում են Աֆրիկայի շոգ տափաստաններում, որտեղ, սիրելի երեխաներ, ինչպես դուք արդեն գիտեք նախորդ հեքիաթից, քիչ անձրևներ են լինում: Իսկ եթե անձրևները շատ չեն, ուրեմն խոտն էլ քիչ է: Իսկ դուք գիտեք, որ թե՛ ընձուղտները, և թե՛ վագրաձիերը խոտակերներ են և, ապրելով նույն տափաստանում, հաճախ էին վիճում, թե ով պիտի ուտի տափաստանային այդ հյութեղ խոտը: Բանն այն էր, որ հյութալի խոտն ամբողջովին չէր բավարարում վագրաձիերին և ընձուղտներին:

Եվ միշտ այդ վեճում հաղթող էին դուրս գալիս վագրաձիերը: Չէ՞ որ նրանք արագավազ ձիուկներ

էին: Վագրաձիերը միշտ առաջ էին անցնում դանդաղաշարժ ընձուղտներից և հասցնում էին ուտել հյութեղ խոտը, մինչև ընձուղտները տեղ կհասնեին: Եվ ստացվում էր այնպես, որ խեղճ ընձուղտներին ոչինչ չէր մնում անել, քան կիսասոված թափառել տափաստաններում և կերակուր փնտրել:

Եվ ահա մի օր հուսահատված ընձուղտները հավաքվեցին ժողովի, որպեսզի մի ճար գտնեն սովից փրկվելու համար:

- Սա անարդար է, - ասած ամենատարեց ընձուղտը: Հետո՞ ինչ, որ դանդաղաշարժ ենք ու չենք կարողանում առաջ անցնել վագրաձիերից և առաջինը հասնել խոտածածկ տարածքներ, ուրեմն այդպես էլ միշտ սոված պետք է մնանք:

Զայրույթից տարեց ընձուղտն ուժգին ոտքը խփեց գետնին, ետ-ետ գնաց և, այ քեզ բան, ընկավ խոր փոսը, որը մինչ այդ չէր էլ նկատել: Երիտասարդ ընձուղտներն իրար անցան, փորձեցին տարեցին փոսից հանել, բայց ապարդյուն՝ փոսը շատ խորն էր: Այդ պահին նրանցից մեկի մոտ մի խելացի միտք ծագեց:

- Եկեք բույսերից երկար պարան գործենք, իջեցնենք փոսը, թող այնտեղ հայտնված մեր ընկերն այն կապի իր վզից ու ոտքերից, իսկ մենք պարանի մյուս ծայրից կձգենք և այդպիսով ընձուղտին կհանենք փոսից:

Այդպես էլ վարվեցին: Հավաքեցին տափաստանից ինչքան չորացած խոտ ու ճյուղ կար, երկար պարան գործեցին ու մի ծայրն իջեցրին խոր փոսի մեջ: Փոսում հայտնված խեղճ տարեց ընձուղտը պարանը կապեց իր կարճլիկ վզից և ոտքերից ու խռպոտ ձայնով փոսի խորքից բացականչեց.

- Ես պատրաստ եմ, կարող եք պարանը ձգել:

Բայց արի ու տես, որ նրան փոսից պարանով հանելն այնքան էլ հեշտ չէր: Տարեց ընձուղտը շատ խորն էր ընկել, բացի այդ ծանր էր ու այդ պատճառով դժվար էր նրան դուրս քաշելը: Բայց երիտասարդ ընձուղտները հո չէին թողնելու, որ իրենց տարեց ընկերը մնար փոսում: Նրանք աշխույժ գործի անցան և խմբովի սկսեցին քաշել

պարանի մյուս ծայրից:

- Կամաց ձգեք պարանը, վիզս ցավում է, ոտքերս ցավում են,- բացականչում էր փոսի խորքից տարեց ընձուղտը:

Բայց նրան ով էր լսում որ. բոլորը գործի էին անցել և ուժգին ձգում էին պարանը, բացականչելով.

- Մեկ, երկու, երեք, դե, ձգեցինք,- միահամուռ իրար ուժ էին տալիս պարանի ծայրից ձգող ընձուղտները:

Եվ այսպես մի քա հաջողվեց տարեց ընձուղտին փոսից դուրս բերել: Բայց, այ քեզ զարմանք, այնքան էին պարանով քաշքշել ու ձգել խեղճի վիզն ու ոտքերը, որ դրանք չափից ավելի երկարել էին:



Երբ տարեց ընձուղտը ոտքի կանգնեց, նա մոտ երեք անգամ ավելի հասակ էր առել մյուսներից և, գիտեք թե ինչու, որովհետև ուներ չափազանց երկար վիզ ու ոտքեր: Բոլորն սկսեցին ափսոսանք հայտնել, որ այդպես ստացվեց: Բայց այդ պահին հանկարծ տարեց ընձուղտի դեմքը փայլեց ուրախությունից, ու նա բացականչեց:

- Էվրիկա՛, իմ սիրելի ընկերներ, գիտեք ինչ լավ բան է երկար վիզ ու ոտքեր ունենալը: Այսպես կարելի է սնվել ծառերի տերևներով, քանի որ իմ դունչը հիմա արդեն հասնում է ծառերի ճյուղերին:

Եվ ընձուղտները որոշեցին ծնվել երակարավիզ և երակարատ, քանի որ այդպես նրանք շատ հեշտ էին կեր հայթայթում իրենց համար և, ձգելով իրենց վիզը, սնվում էին ծառի թարմ տերևներով, ինչը չէին կարող անել արագավազ, բայց կարճլիկ վագրաձիերը:

Ու մինչև այսօր վագրաձիերը և ընձուղտները միասին հաշտ ու խաղաղ ապրում են տափաստաններում: Չէ որ նրանք կիսել են իրենց հասանելիք կերակուրը ըստ հասակի: Դե, պարզ է, չէ՞, սիրելի երեխաներ, տափաստանի առաջին հարկի խոտը բաժին է ընկնում վագրաձիերին, իսկ երկրորդ հարկում ծառերի հյութեղ տերևներով սնվում են երկարավիզ ընձուղտները, ու մինչև այսօր այդ կենդանիները կիսելու ոչինչ չունեն:



ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՁԿՆԵՐԸ ԼՌՈՒՄ

Դուք երևի լսած կլինեք, սիրելի երեխաներ, թե ինչպես են ասում. «այս մարդը լուռ է, ինչպես ձուկը»: Իրոք, դեռևս մեզնից ոչ ոք չի տեսել, որ երբևիցե ձկները խոսեն: Սակայն շատ տարիներ առաջ ձկները շատախոսել են և նույնիսկ բարձրաձայն, իսկ թե ինչու են հիմա լռակյաց, ես հիմա ձեզ կպատմեմ:

Օվկիանոսների և ծովերի ջրերում բազմատեսակ ձկներ են ապրում, որոնք տարբերվում են միմյանցից և շատ գեղեցիկ են: Դրանք ունեն տարբեր գույներ, չափեր և նույնիսկ մարմնի տարբեր ձևեր: Եթե դուք որևէ մեկի տանը տեսնեք ակվարիում, ապա կհասկանաք, թե ինչ գեղեցկության ձկներ կան՝ կանաչ, կարմիր, դեղին, մեծ ու փոքր, երկար ու կարճ: Բայց արի ու տես, որ դեռ մինչև այսօր ձկները դեռ չեն որոշել, թե իրենցից ով է ամենից գեղեցիկը:

Եվ ահա, նրանք անընդհատ վիճում էին, թե ով է ամենագեղեցիկ ձուկը: Պարզ էր, որ ոչ ոք չէր զիջելու: Եվ ամեն անգամ, որպեսզի պարզվեր, թե ով է գեղեցիկ, վիճող ձկները գնում էին ծովերի թագավոր Նեպտունի մոտ, որ ինքը որոշեր, թե որ ձուկն է գեղեցիկ: Իսկ դուք գիտեք, որ բոլոր թագավորներն իմաստուն են և չեն ուզում նեղացնել իրենց հպատակներին: Եվ այդ պատճառով, երբ վեճի բռնված ձկները դիմում էին ծովի հատակին ապրող իրենց թագավորին, Նեպտունը նրանց ընդունում էր առանձին-առանձին՝ ասելով յուրաքանչյուրին, որ հենց ինքն է ամենից գեղեցիկ ձուկը:

Դե, պարզ էր, որ յուրաքանչյուր ձուկ շատ գոհ և երջանիկ էր

դուրս գալիս Նեպտունի պալատից, քանի որ անձամբ էր լսել թագավորից, որ ինքն է ամենագեղեցիկը:

Բայց այս իրավիճակը երկար չտևեց: Բոլոր ձկները նորից սկսեցին վիճել իրար հետ՝ ասելով, որ թագավորը անձամբ է հաստատել իրենցից յուրաքանչյուրի գեղեցկությունը: Բանը հասավ նրան, որ նրանցից յուրաքանչյուրը նորից էր խնդրում թագավորի հետ



հանդիպում և անդադար բողոքում էր, որ մյուս ձկները հանդգնում են ստել և թագավորի խոսքը գետնովը տալ՝ ասելով, թե իրենք են գեղեցիկ:

Դե, հասկանում եք, չէ՞, սիրելի երեխաներ, թե օրական քանի հազար քանի ձուկ պետք է բողոքի գնար թագավորի մոտ և չարախոսեր մյուսների հասցեին: Նման իրավիճակը գնալով անտանելի էր դառնում Նեպտունի համար: Մի կողմ թողած թագավորական կարևոր գործերը՝ նա ստիպված ժամերով լսում էր հպատակ ձկների բողոքները և զայրանում նրանց շատախոսության վրա:

Եվ մի օր էլ օվկիանոսների և ծովերի տիրակալ Նեպտունի համբերության բաժակը լցվեց և որոշեց վերջ տալ այս պատմությանը: Նա հրաման տվեց, որ այսուհետև, իրենից բացի, ջրի տակ ապրող բոլոր կենդանիները չպետք է խոսեն, այլապես կպատժվեն: Դրանից հետո թագավորի ականջները հանգստացան: Այլևս ոչ մի ձուկ չէր համարձակվում գնալ նրա մոտ և խոսք բացել սեփական գեղեցկության մասին:

Ու մինչև այսօր ձկները չեն խոսում, բայց դեռևս չեն հանգստանում, և յուրաքանչյուրը կարծում է, թե ինքն է ամենագեղեցիկը, և մինչև այսօր անձայն վիճում են: Այ, եթե դուք նստեք ակվարիումի կողքը և դիտեք լողացող ձկներին, ապա կտեսնենք, որ նրանք անընդհատ լողում են և իրենց բերանները շարունակ բացել-փակելով՝ կարծես անձայն ասում են. «Ես եմ ամենագեղեցիկը, ես եմ ամենագեղեցիկը»:



ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ԳՈՐՏԵՐԸ ԿՈԿՈՒՄ

Եթե դուք անցնեք լճակների և ջրափոսերի կողքով, որտեղ գորտեր են բնակվում, կլսեք, որ նրանք խմբերով կոկռում են, և ոչինչ չեք հասկանա այդ աղմուկից: Իսկ ես, քանի որ գիտեմ գորտերի պատմությունը, հասկանում եմ, որ դա ոչ թե կոկռոց է, այլ պարզապես խմբակային երգ: Դե, ուրեմն, սիրելի երեխաներ, դուք էլ լսեք այս պատմությունը:



Կար մի ժամանակ, երբ գորտերն ապրում էին ոչ թե լճակներում և ջրափոսերում, այլ ծովերում և օվկիանոսներում՝ ձկների հետ կողք կողքի: Նրանք շատ լավ երգում էին, այնքան լավ, որ օվկիանոսների և ծովերի տիրակալ Նեպտունը նրանց հաճախ էր հրավիրում պալատական խնջույքներին երգելու:

Դե, իհարկե, եթե սկզբնական շրջանում գորտերը դրանից շոյվում էին, ապա հետագայում հետզհետե սկսեցին գոռոզանալ և այնքան մեծամտացան, որ իրենց թվաց, թե թագավոր Նեպտունը չի կարող ապրել առանց գորտերի երգեցողության:

Եվ ահա, գորտերը ջրի հատակում սկսեցին այս ու այն կողմ պարծենալ և լուրեր տարածել, թե իբր Նեպտունն այնքան է

սիրահարված իրենց երգին, որ ի վերջո հրավիրելու է գորտերին թագավորական պալատ՝ մշտական բնակության:

Իսկ եթե պարզ խոսենք, սիրելի երեխաներ, թագավորական պալատը իսկի էլ անճոռնի գորտերի տեղը չէր: Այնտեղ բնակվում էին գեղեցիկ և հմայիչ ձկներ, որոնք իրենց գույնզգույն լողակներով մի հրաշալի փայլ էին հաղորդում պալատին: Եվ, պատկերացնում եք, չէ՞, թե ինչպես կփչացնեին գորտերն այդ տեսարանը իրենց բլխկան աչքերով և անճոռնի կառուցվածքով:

Բայց սա դեռ բոլորը չէր: Պարծենկոտ և մեծամիտ գորտերի կողմից տարածվող սուտ լուրերը, թե իրենք պալատում պետք է ապրեն, հասան Նեպտուն թագավորին: Նա շատ զայրացավ գորտերի հանդուգն ցանկությունների համար և հրամայեց դուրս վռնդել բոլոր գորտերին օվկիանոսների և ծովերի հատակներից:

- Արգելում եմ, որ բոլոր գորտերն ապրեն ծովերում և օվկիանոսներում,- ասաց Նեպտունը: Դո՛ւրս վռնդեք այդ պարծենկոտներին, թող ապրեն աչքիցս հեռու՝ ցամաքում: Ավելին, որպես թագավոր ես ինձ իրավունք եմ վերապահում զրկելու գորտերին գեղեցիկ ձայնից և անելու այնպես, որ գեղեցիկ երգելու փոխարեն նրանք կռկռան և այդպիսով ոչ թե հաճույք, այլ զզվանք պատճառեն լսողներին:

Թագավորի հրամանը կատարվեց անմիջապես: Գորտերին վռնդեցին ծովերի հատակից դեպի ցամաք՝ խլելով նրանցից նաև գեղեցիկ ձայնն ու երգելու կարողությունը:

Եվ ահա, մինչև այսօր, ապրելով լճակներում և ջրափոսերում, գորտերը առիթը բաց չեն թողնում անցորդների համար խմբակային «երգելու»: Գորտերը նկատելով մեզ՝ անմիջապես հավաքվում են և սկսում են երգել, ինչպես ժամանակին անում էին իրենց անդրօվկիանոսյան պալատում:

Նրանց մինչև հիմա թվում է, որ առաջվա պես գեղեցիկ են երգում և ցանկանում են դրանով զարմացնել մեզ: Սակայն խեղճերը չեն էլ գիտակցում, որ մարդկանց համար գորտերի այդ խմբերգը հաճելի չէ, քանի որ ընդամենը կոկռոց է, որը երկար անհնար է լսել: Բայց գորտերը դա չեն հասկանում ու մինչև այսօր դեռ շարունակում են միասին կռկռալ ու կռկռալ, կարծելով, թե շատ լավ են երգում:



ԹԵ ԻՆՉՈՒ Է ՁԻՈՒ ՊՈՉԸ ԱՅԴՔԱՆ ԳԵՂԵՑԻԿ

Սիրելի՛ երեխաներ, դուք նկատած կլինեք, որ ընտանի կենդանիները, հատկապես խոշորները, գեղեցիկ պոչ չունեն: Կովերը, ոչխարները, ավանակները, շները, որոնք ապրում են մարդկանց հետ միասին և օգտակար գործեր են անում, առանձնապես գեղեցիկ պոչ չունեն: Միայն ձին է, որ գեղեցիկ պոչ ունի. և ահա թե ինչու:

Վաղուց, շատ վաղուց, մարդիկ որոշեցին ընտանի կենդանիներ պահել, որոնք օգտակար կլինեին իրենց համար: Առաջինը նրանք նկատեցին կովերին և ոչխարներին, որոնք կաթ և միս էին տալիս մարդկանց: Հետո իրենց բակերում մարդիկ սկսեցին պահապան շներ բերել, որոնք պահպանում էին անպաշտպան կովերին ու ոչխարներին չար գայլերից: Եվ վերջապես ավանակը նույնպես միացավ ընտանի կենդանիներին, որը մարդուն օգնում էր ծանր բեռներ տեղափոխելիս և, ինչու չէ, թույլ էր տալիս մարդկանց հեծնելու իրեն և միասին երկար ճանապարհ անցնելու:

Իհարկե, այս բոլորին հետևում էր վայրի ձին, որը ապրում էր դաշտերում և ինքն էլ շատ էր ուզում միանալ ընտանի կենդանիների ընտանիքին: Ձին շատ լավ գիտեր, որ ավանակից ուժեղ ու արագավազ է և կարող է մարդուն շատ օգուտ տալ: Բայց չգիտես թե ինչու մարդիկ նրան չէին էլ նկատում և ցանկություն չունեին դարձնելու ընտանի կենդանի:

Այս հանգամանքից ձին շատ էր վիրավորվում և օրերից մի օր որոշեց գնալ մարդու մոտ և խնդրել, որ իրեն ընդգրկեն ընտանի կենդանիների շարքը:

- Դու իմ ինչ՞ին ես պետք,-ասաց մարդը: Ես ավանակ ունեմ, որ իմ բեռնակիրն է, նույնիսկ ցանկության դեպքում հեծնում եմ նրան և երկար ճամփա ընկնում: Գոնե գեղեցիկ լինեիր, որի համար քեզ դարձնեի ընտանի կենդանի: Մի քեզ նայիր, ինչ տգեղ ատամներ ու պոչ ունես:

Ձին շատ վիրավորվեց այս խոսակցությունից և գլխիկոր հեռացավ: Քայլեց, շատ երկար քայլեց և հասավ մի լճակի: Երկար նայեց իրեն լճակի հայելու մեջ և տեսավ, որ իրոք շատ կարճլիկ



ու տգեղ պոչ ունի, ինչպես ավանակինն էր: Սկսեց արտասվել, և արցունքներն սկսեցին կաթիլ-կաթիլ ընկնել լճակի մեջ:

Բայց ձին չգիտեր, որ այդ լճակում ոսկե ձկնիկ է ապրում, որը շատ բարի է և կարող իր կախարդանքով օգնել բոլորին: Եվ ահա ոսկե ձկնիկը, լսելով ձիու լացակումած խրխինջը և տեսնելով լճակ թափվող արցունքները, լճի խորքից բարձրացավ վեր և, գլուխը հանելով ջրից, հարցրեց.

- Ինչո՞ւ ես արտասվում, բարի ձի: Ի՞նչ ես ցանկանում, որ քեզ համար անեմ: Ես կանեմ այն ամենը, ինչ որ հիմա ուզես:

- Ինձ ընդամենը պետք է գեղեցիկ պոչ ունենալ, որ այն լինի երկար և թավշյա, որ բոլոր կենդանիները բարի նախանձով նայեն ինձ, իսկ մարդը հիանա իմ պոչի գեղեցկությամբ, - ասաց ձին:

- Դա ինձ համար հեշտ իրականացվող ցանկություն է,- ասաց ոսկե ձկնիկը և, պոչով խփելով ջրին, սուզվեց լճակի հատակը:

Եվ, այ քեզ հրաշք, ձին ջրի մեջ տեսավ իր արտացոլանքը, և նկատեց, որ կարճ ու անշուք պոչի փոխարեն հիմա արդեն երկար և թավշյա գեղեցիկ պոչ ունի:

Ձին սկսեց հպարտանալ իր պոչով և այնքան ուրախ էր, որ նույնիսկ մոռացավ ընտանի կենդանիներին միանալու ցանկության մասին: Բայց փոխարենը, մարդը նկատեց գեղեցկապոչ ձիուն և առիթը բաց չէր թողնում դաշտերում վազող վայրի ձիուն բռնելու և տուն բերելու:

Այդպես էլ եղավ: Մի գեղեցիկ օր մարդը բռնեց դաշտում արածող ձիուն, սանձեց նրան և ընդունեց որպես ընտանի կենդանիների ընտանիքի մշտական անդամ:

Եվ դրանից արդեն արդեն մարդը հասկացավ, որ ձին ոչ միայն գեղեցիկ պոչ ունի, այլև ավելի արագավազ է, քան ավանակը, ավելի հավատարիմ է, քան շունը: Եվ մինչև այսօր մարդն ու ձին հավատարիմ բարեկամություն են անում, որը չէր սկսվի, եթե չլիներ ձիու գեղեցիկ պոչը:

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԱՐԾՎԻ ԿՏՈՒՑԸ ԿԵՌ

Շատ տարիներ առաջ արծիվներն ունեցել են սուր կտուցներ, ինչպես բոլոր թռչունները, ու հիմա է, որ նրանց կտուցները կեռ են դարձել: Իսկ թե ինչու այդպես եղավ, հիմա կիմանաք:

Արծիվները շատ բարձր են թռչում: Նրանք ունեն ուժեղ թևեր և սուր տեսողություն, այնքան սուր, որ կարող են մեծ բարձրությունից տեսնել դաշտում վազող փոքր մկներին և որսալ նրանց: Եվ պատահական չէ, որ թռչունները հենց արծվին ընտրեցին իրենց թագավոր, որովհետև արծիվն ուժեղ էր, արագաշարժ և կարողանում էր թևերը բացելով հանգիստ, ժամերով սավառնել օդում և վերևից հսկել իր թագավորությունը: Բայց արի ու տես՝ արծիվը ցանկանում էր թագ ունենալ, որ կրեր իր գլխին և թռչուններից տարբերվեր որպես թագավոր: Բայց թագավորին վայել թագ թռչունները ոչ մի կերպ չէին կարողանում գտնել:



Եվ ահա օրերից մի օր արծիվը զայրացավ և թռչուններին հավաքեց ժողովի:

- Ես ամբողջ օրը սավառնում եմ երկնքում, հսկում եմ իմ թագավորությունը և շատ քիչ եմ լինում ներքևում: Իսկ դուք ապրում եք ծառերի վրա ու չեք կարողանում անտառից մի գեղեցիկ թագ գտնել ինձ համար: Հրամայում եմ բոլոր թռչուններին երկու օրվա ընթացքում ինձ համար թագ գտնել, այլապես ես չեմ լինի ձեր

թագավորը և կհեռանամ ձեզնից,- ասաց արծիվն ու սրտնեղած ճախրեց վեր, դեպի երկնքի հեռուներ:



Թռչունները շատ վշտացան: Նրանք շատ էին սիրում իրենց թագավոր արծվին և չէին ուզում նեղացնել նրան: Բայց ինչ կարող էին անել: Որտեղից երկու օրվա ընթացքում թագ գտնեին: Եվ ահա թռչունները որոշեցին դիմել իմաստուն բուին: Նա շատ խելացի էր և հաստատ մի ճար կգտներ:

Բուն ցերեկները քնում էր, իսկ գիշերներն արթնանում և դուրս էր գալիս որսի: Թռչուններն սպասեցին մինչև գիշեր, որ բուն արթնանա, ու հետո, մոտենալով բուի փչակին, սկսեցին հերթով խորհուրդ հարցնել, թե ինչպես թագ գտնեն իրենց թագավորի համար: Իմաստուն բուն լսեց-լսեց ու պատասխանեց:

- Մենք թռչուններ ենք և չենք կարող իսկական թագ պատրաստել արծվի համար, այն էլ՝ երկու օրում: Այստեղ խորամանկություն է պետք անել, բայց այնպես, որ թագավորը մեզնից գոհ լինի, չնեղանա ու չհեռանա:

- Իսկ ինչ անենք, ինչ անենք,- ծլվլում էին թռչունները:

- Ահա թե ինչ կանենք,- պատասխանեց բուն:- Գետակի ափին ես մի փայլփլուն և մեծ բյուրեղ քար եմ տեսել: Այն թափանցիկ է, և երբ ուշադիր դիտում ես, կարծես ներսում բյուրեղներից կազմված թագանման պատկեր ես տեսնում: Մեր թագավոր արծվին կասենք, որ գտել ենք նրա թագը, թող վերցնի այդ քարը և փորձի կոտրել և այնտեղից դուրս բերել բյուրեղանման այդ թվացյալ թագը:

Այդպես էլ վարվեցին: Թռչունների մի մեծ խումբ սավառնեց երկինք, դեպի իրենց թագավորը, որպեսզի արծվին տեսնեն և հայտնեն, որ գտել են նրա թագը: Արծիվը շատ ուրախացավ, երբ վայր իջնելով տեսավ այդ գեղեցիկ բյուրեղ քարը: Չէ՞ որ քարի միջից գեղեցիկ պսպղում էր թվացյալ թագը:

- Իսկ ինչու՞ չեք հանել թագը քարի միջից,- զարմացավ արծիվը:

- Մեր սիրելի թագավոր, քարը շատ ամուր է, մենք չկարողացանք այն ջարդել: Դու մեր մեջ ամենաուժեղն ես: Ինքդ փորձիր քարը կոտրել և միջից հանել այս գեղեցիկ թագը:

- Շատ լավ,- ասաց արծիվը և իր սուր ճանկերով բռնելով քարը՝ սրընթաց սավառնեց երկինք:

Իսկ դուք գիտե՞ք, սիրելի երեխաներ, թե ինչ եղավ հետո: Խեղճ արծիվը մինչև այսօր կտցահարում է այդ փայլփլուն բյուրեղը՝ փորձելով այնտեղից դուրս բերել երանելի թագը: Բայց հո մենք գիտենք, որ բյուրեղը շատ կարծր է և հնարավոր չէ անգամ արծվի հզոր կտուցով այն ջարդել: Դե պարզ է, որ անընդհատ քարը կտցահարելով, արծիվը պետք է ծռեր իր սուր կտուցը և այն դարձներ կեռանման:

Ահա թե ինչու, սիրելի երեխաներ, մինչև այսօր արծիվները թագ չեն կրում, չնայած որ թռչունների թագավորն են, բայց փոխարենն ունեն կեռ կտուցներ, որոնք սազական են թագավորներին:

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԱՔԼՈՐԸ ԾՈՒՂՐՈՒՂՈՒ ԿԱՆՉՈՒՄ

Դուք, սիրելի՛ երեխաներ, երևի նկատած կլինեք, որ լուսաբացին աքլորները ծուղրուղու են կանչում: Շատերին թվում է, որ այդպես նրանք արթնացնում են «քնած հավերին», քանի որ բոլորս էլ հո գիտենք, որ հավիկները քնել շատ են սիրում: Բայց իրականում աքլորները ծուղրուղու են կանչում ոչ թե հավերին արթնացնելու, այլ ուրիշ պատճառով, որի մասին հիմա ես ձեզ կպատմեմ:

Աքլորները շատ գեղեցիկ են: Նրանք ունեն գույնզգույն թևեր, վառ գույներով պոչ և փարթամ ու ձիգ կատարներ: Եվ այդ է պատճառը, որ նրանք միշտ կտուցները վեր ցցած, հպարտ-հպարտ քայլում են հավանոցում և ցուցադրում իրենց գեղեցկությունը հավերին՝ շահելով վերջիններիս համակրանքը:

Բայց և այնպես, աքլորները գիտեին, որ իրենց միակ արժանիքը գեղեցկությունն է: Նրանք չէին կարողանում գեղեցիկ երգել մյուս թռչունների նման կամ արծիվների պես սավառնել օդում: Ճիշտ է, հավերին էլ դա չէր հաջողվում, բայց գոնե նրանք ձու էին ածում և բոլորին օգուտ էին տալիս:

Օրերից մի օր, հավանոց մտնելիս, գոռոզ աքլորը շատ պատահական լսեց հավերի բամբասանքը.

- Չեմ հասկանում, ինչու՞ են մարդիկ կերակրում այս աքլորներին, որոնք անգամ ձու ածել չգիտեն: Ո՞ւմ է պետք նրանց այդ գեղեցկությունը, որից ոչ մի օգուտ չկա, - ասաց մի հավիկ:

Իսկ մյուսը ավելացրեց.

- Դուք, իհարկե, ճիշտ եք ասում: Այ, օրինակ, արևը նույնպես շատ գեղեցիկ է: Ամեն օր մենք հիանում ենք նրա պայծառությամբ և ինչքան օգուտ ենք ստանում նրանից՝ լույս, ջերմություն….

Ու հավերը լռեցին, երբ նկատեցին հավաբուն մտնող աքլորին, որը, լսելով այս բամբասանքը, շատ վշտացավ: Նա անգամ սկսեց նախանձել արևին, որին հավերը այդքան նկատում ու գնահատում էին, իսկ իրեն՝ ոչ: Եվ հանկարծ նրա մեջ մի միտք հղացավ…

Իսկ ինչ կլինի, եթե այլևս արևը չծագի: Այդ դեպքում հավերը կմոռանան արևին և կհետաքրքրվեն միայն աքլորների գեղեցկությամբ: Եվ աքլորը որոշեց վախեցնել արևին իր ծուղրուղուով. գուցե արևը դրանից վախենա և այլևս չծագի:

Ու մինչև հիմա ամեն առավոտ, լուսաբացին աքլորը թառում է հավաբնի կտուրին ու ծուղրուղու կանչում, որպեսզի վախեցնի արևին ու չլինի արևածագ: Բայց արևն էլ, հո գիտենք, ո՛չ աքլորներից է վախենում, ո՛չ էլ նրանց ծուղրուղուներից. ամեն առավոտ ուրախ երկինք է բարձրանում ու ջերմացնում է բոլորիս: Իսկ միամիտ աքլորները դեռ իրենց հույսը չեն կորցնում և ամեն լուսաբաց ծուղրուղու են կանչում ու չեն էլ հասկանում, որ դրանով չեն վախեց-նում արևին, բայց և այնպես, ամեն օր նկատելի և սիրելի են դառնում հավիկների համար: